ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1958 Общественные науки

Կ. Ղաֆադարյան

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻ ԱՆՀԱՅՈՂ ՓՈՐՁ

Զվարթնոցի տաճարը, ինչպես հայտնի է, միջնադարյան Հայաստանի ճարտարապետական գլուխ-գործոցներից մեկն է։ Նրա կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված են հայ, ռուս և օտար գիտնականների բազմաթիվ աշխատություններ։ Բոլորի կողմից էլ Զվարթնոցը համարվել է համաշխարհային արժեք ներկայացնող հուշարձան և միջնադարյան Հայաստանի մեծագործություններից մեկը։

Ինչ խոսք, որ Զվարթնոցի ավերակների պահպանության հարցը շատ է զբաղեցրել Հայաստանի հնագետներին։

Դեռևս 1904—1906 թթ. ճարտարապետ Թորոս Թորամանյանը տաճարի ուսումնասիրությանը զուգընթաց դասավորեց բոլոր քանդակազարդ բեկորներն իրենց հայտնաբերված տեղում, որպեսզի ամեն մի ուսումնասիրող իմանա թե որ քարը տաճարի որ մասումն է գտնվել տաճարի կործանման ժամանակ։

1931 թ. պեղումներ կատարվեցին Ռ. Թորամանյանի մասնակցությամբ, և այդ ժամանակ հողից ազատվեցին հարավային շինությունները։ 1935—1937 թթ. ընթացքում Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն տողերիս գրողի ձեռքով բարեկարգեց ավերակները, և քանդակազարդ բեկորները դասավորվեցին քարե պատվանդանների վրա, որպեսզի ազատվեն խոնավությունից[1]։

Վերջին մի քանի տարիների ընթացքում Ճարտարապետական հուշարձանների պահպանության վարչությունը զգալի կերպով բարեկարգեց Զվարթնոցի շրջապատը։ Նա ավերակների շուրջն ազատեց լիցք հողից, հնավայրը շրջափակեց պարիսպով, իսկ այժմ էլ սկսել է տաճարի ավերակները բարեկարգել։

Զվարթնոցի ավերակների պահպանության խնդիրը դեռևս օրակարգից չի հանված։ Ճարտարապետական հուշարձանների պահպանության վարչությունը հսկայական աշխատանք ունի կատարելու այնտեղ տաճարի մնացորդներն ամրացնելու և պեղումներն ամբողջացնելու համար։

1956 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստների տեսության և պատմության սեկտորի աշխատակից, ճարտարապետության թեկնածու ընկ. Ստեփան Մնացականյանը ավերակների բոլոր կողմերից հավաքել էր տաճարի տարբեր մասերին պատկանող բեկորներ և նրանցից կազմել Զվարթնոցի 32 նիստերից մեկի արտաքին պատի առաջին հարկաբաժինը, որպեսզի պատրանք ստեղծի տաճարի մասնակի վերականգնման մասին։ Ս. Մնացականյանը Զվարթնոցի քանդակազարդ բեկորներն արհեստականորեն հարմարեցրել էր միմյանց և փռել բաց դետնի վրա, տաճարի հարթակի հյուսիսային կողմում։

---

[1] Դժբախտաբար Խաչիկ Դաղյանը տաճարի մեջ գտնված քարերի մի մասն անցյալում իրենց բուն տեղից հեռացրել է, ուստի այժմ հնարավոր չէ որոշ քարերի և զանգվածների իսկական տեղը ճշտել։ Այդ մասին տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Բ մասնավածու, Երևան, 1948, էջ 289։

Այս առթիվ Կուլտուրայի հուշարձանների պահպանության գիտամեթոդական խորհուրդը համապատասխան որոշում ընդունեց և պարտադրեց Մնացականյանին Զվարթնոցի քանդակազարդ բեկորները նորից իրենց տեղերում դասավորել, որը և կատարվեց 1957 թ. ամռանը։

Սակայն, «Սովետական Արվեստ»-ի 1957 թ. առաջին համարում լույս տեսավ Ս. Մնացականյանի «Զվարթնոցի մասնակի վերականգնման հնարավորության մասին» հոդվածը, որի մեջ նա առաջարկություն է անում Զվարթնոցի տաճարը մասնակիորեն վերականգնելու մասին։

Ս. Մնացականյանը առաջարկում է վերականգնել Զվարթնոցի հետևյալ մասերը՝

ա. Տաճարի բարձրադիր հարթակը և նրա աստիճանները, որ տեղ-տեղ քանդվել և, տաճարի կործանման ժամանակ վերևից ընկած մեծազանգված բեկորների տակ, խորդուբորդ են դարձել։

բ. Արտաքին պատի առաջին հարկաբաժնի երեք նիստերը և նրանց կղմինդրյա ծածկը։

գ. Ներքին սյունաշարքերը և դմբեթակիր մույթերը, վերջինները վերականգնվում են սյունաշարքերի բարձրության չափով։ Սրանց հետ վերականգնվում են նաև դմբեթակիր մույթերի հետևում գտնվող չորս արծվեխոյակ սյուները։

դ. Արտաքին պատի մի շարք քարեր՝ տեղում մնացածի պահպանությունն ապահովելու համար։

Համառոտակի թննենք նշված մասերի վերականգնման հնարավորությունները։

ա. Տաճարի հիմքը հանդիսացող հարթակի բոլոր քարերը ջարդոտված են ու խորդուբորդ վիճակումն են գտնվում։ Պեղումների ժամանակ Խաչիկ վարդապետը լավ պահպանված քարերի մի մասը հանել տարել է, իսկ հարթակի բազմանիստ աստիճանների քարերից տեղում քիչ բան է մնացել, այնպես որ այդ հարթակի ու աստիճանների նորոգումը կամ վերականգնումը, գրեթե ամբողջապես նոր քարերով պետք է կատարվի։

Այդպիսով, վերականգնելուց հետո հին հարթակի տեղում կստացվի բոլորովին մի նոր հարթակ՝ իր նոր աստիճաններով, որ հնի հետ ոչ մի կապ չի ունենա։

Այսպիսի վերանորոգումը կարելի էր նպատակահարմար համարել միայն այն դեպքում, եթե Զվարթնոցի տաճարը կանգուն լիներ։ Այն ժամանակ տաճարի պատկերն ամբողջացնելու նպատակով կարելի էր այդ վերականգնումը կատարել։ Բայց քանի որ այժմ տաճարը չկա և տեղում մնացել է նրա բեկորների միայն մի չնչին մասը, ուստի և նա նոր աստիճանների ու նոր հարթակի կարիքը չի կարող ունենալ։ Ավերակների մեջ նոր շինած հարթակը կաղավաղի հուշարձանի ընդհանուր պատկերը, մանավանդ որ այդ վերականգնումը ոչ մի չափով չի նպաստի Զվարթնոցի մնացորդների հետագա պահպանմանը։

Ս. Մնացականյանի կարծիքով «աստիճանների և սալահատակների վերականգնումն արմատապես կփոխի հուշարձանի արտաքին տեսքը»[1]։

Մենք էլ ճիշտ նույն կարծիքին ենք։ Բայց մեր նպատակը ոչ թե Զվարթնոցի արտաքին տեսքն արմատապես փոփոխելն է, այլ նրա տեսքն անաղարտ

[1] «Սովետական արվեստ», 1957, № 1, էջ 48։

վիճակում պահպանելը։ Նրա բոլոր առաջարկություններն էլ, ինչպես հետզհետե կպարզվի մեր շարադրության մեջ, նպաստում են ոչ թե եղածը պահպանելուն, այլ հուշարձանի տեսքն «արմատապես» փոփոխելուն։

բ. Անհաջող և միանգամայն անընդունելի է հոդվածագրի այն առաջարկը, որ տաճարի արտաքին պատերը հետագա քայքայումից փրկելու համար անհրաժեշտ է նրանց մնացորդների վրա ավելացնել մի շարք ևս, որն, ինչպես ենթադրում է հեղինակը, «ոչ միայն կնպաստի տասնամյակներ շարունակ քայքայված մասի ամրացմանը, այլև հասկացողություն կտա բազմանիստ պատի և նրա նիստերի հատման անկյուններում դրված որմնասյուների մասին. դա նաև խիստ կարևոր է հուշարձանի արտաքին կոմպոզիցիայի մասին ճիշտ պատկերացում ստեղծելու համար»[1]։

Այդպիսի մի փորձ սրանից 50 տարի առաջ կատարել էր Խաչիկ վարդապետը. նա տաճարի և հարակից շենքերի պատերի մնացորդների վրա ավելացրել էր մի շարք ևս, բայց դրանով նա այլանդակել էր հուշարձանը և Թ. Թորամանյանի պահանջով այդ շարքը հեռացվեց տաճարի և մյուս շենքերի վրայից։ Միայն տեղ-տեղ հարակից շենքերի վրա այժմ էլ մնացել են Խաչիկ վարդապետի կողմից ավելացված շարքի հետքերը և ամեն ոք կարող է տեսնել, թե դրանք ինչ չափով են նպաստում հուշարձանի «կոմպոզիցիայի մասին ճիշտ պատկերացում ստեղծելուն», որին ձգտում է Մնացականյանը։

Այդ նույն սխալն ուզեց կրկնել նաև Ճարտարապետական հուշարձանների պահպանության վարչությունը սրանից մի քանի տարի առաջ։ Նա, ինչպես վերևում նշեցինք, քանդակազարդ բեկորների տակից հանեց իբրև պատվանդան ծառայող սրբատաշ քարերը, որպեսզի նրանցով ավերակների պատերի վրա մի շարք ավելացում կատարի, բայց այդ փորձն անհաջող անցավ, որովհետև պատվանդանի քարերն արդեն անպետքացել էին պատաշարի համար։

Պետք է նշել, որ հին հուշարձանները հետագա քայքայումից ղերծ պահելու համար նրանց վրա որևէ հավելումներ անելու մեթոդն այժմ հնացած և անընդունելի է։ Ներկայումս հնագիտության մեջ այդ նպատակի համար օգտագործվում են այնպիսի միացումներ, որոնք պատերի մակերեսը կարծրացնում և անձրևի, ձյան, քամու համար անթափանցելի են դարձնում, ընդ որում այդ միացումները հուշարձանի մեջ տեսանելի որևէ փոփոխություն չեն մտցնում։ Այդ նպատակի համար այժմ օգտագործում են, այսպես կոչված, հեղուկ ապակին, բուտերալը և այլն։ Սրանք ավերակները երկար ժամանակով ապահովվում են քայքայումից։

գ. Ավելի անհաջող և անընդունելի է Ս. Մնացականյանի առաջարկը Զվարթնոցի արտաքին պատի առաջին հարկաբաժնի երեք նիստերը, ներքին կիսաբոլոր սյունաշարքերը և արևելյան խուլ պատ ունեցող կիսաբոլոր խորանը, գմբեթակիր մույթերը ու արծվախոյակ սյուները վերականգնելու մասին։ Ս. Մնացականյանը հայտարարում է, թե Զվարթնոցի այդ մասերի «գրեթե բոլոր քարերը կարելի է գտնել տեղում»[2]։

Սակայն ընկ. Ս. Մնացականյանին քաջ հայտնի է, որ Զվարթնոցում ոչ միայն չի կարելի գտնել վերականգնվող երեք նիստերի իսկական քարերը, այլև իրենց իսկական քարերով ոչ մի պատուհան, մուտք, սյուն կամ մի որևէ

[1] «Սովետական արվեստ», 1957, № 1, էջ 48։
[2] Նույն տեղում, էջ 49։

այլ մաս չի կարելի վերականգնել տեղում շատ քիչ բան մնացած լինելու պատճառով։ Ուրեմն, նա առաջարկում է տարբեր մասերի քարերը հավաքելով, որևէ կերպ վերականգնել տաճարի արտաքին պատի երեք նիստերը, ինչ փույթ, թե քարերի կարերը, բարձրությունը, լայնքը, հաստությունը, քանդակները և ձևավոր մասերը միմյանց չեն բռնի։

դ. Ներքին սյունաշարքերն ու մույթերը ևս չի կարելի վերականգնել իրենց սեփական քարերով։ Այստեղ նույնիսկ անհնարին է տեղում գոյություն ունեցող քարերի ընտրությամբ վերականգնել սյուները, բայց որովհետև այդ հարկաբաժնի բոլոր սյուներն էլ վերականգնվելու են ըստ Մնացականյանի առաջարկի, ուստի մնում է միայն մի բան. սյուների քարերի մեծագույն մասը նոր քարերով փոխարինել և շարել տեղում պահպանված բեկորների հետ միասին։

Մնացականյանը առաջարկում է «համանման քարերից հաշել նաև մյուս հատվածները, նույն տրամագծով և նույն չափով»[1]։ Բայց այդ բոլորն ինչի համար է արվել։ Հավանաբար դարձյալ հուշարձանի տեսքը արմատապես փոխելու նպատակով, որը բոլորովին ընդունելի չէ։ Մնացականյանը նույնիսկ առաջարկում է վերականգնվող նրեք նիստերի ծածկը շինել և այն ծածկել նույնպիսի կղմինդրով, ինչպիսին ունեցել է Զվարթնոցի տաճարը։ Նա այդ առթիվ իր հոդվածում գրում է. «Ոչ մի դժվարություն չի ներկայացնում նաև հիշյալ հատվածի կղմինդրածածկի վերականգնումը, որովհետև տեղում պահպանված կղմինդրների հիման վրա նույն չափով և ձևով կարելի է պատրաստել անհրաժեշտ քանակությամբ կղմինդր»։ Բայց չէ՞ որ Զվարթնոցի տաճարի կղմինդրների ամեն մի շարքն ունեցել է իր ուրույն չափը, որ այլ տեղում բոլորովին չի կրկնվել։ Թե ինչի հիման վրա պետք է վերականգնվեն այդ կղմինդրները, երբ նրանց օրինակները չկան, մեզ համար անհասկանալի է։ Մնում է, որ հոդվածի հեղինակը ինքը հորինի այդ կղմինդրի չափերն ու ձևերը՝ հնի մոտավոր նմանությամբ, բայց ո՞րքան դա հարմար կլինի Զվարթնոցի նման համաշխարհային արժեք ունեցող հուշարձանի համար։

Հին հուշարձանները պահպանելու և վերականգնելու երկու եղանակ է հայտնի.

ա. Եթե կործանված կամ ավերված հուշարձանի շրջապատում չնչին բացառությամբ պահպանվել են նրա բոլոր քարերը, այդ դեպքում կարելի է վերականգնել հուշարձանն իր սեփական քարերով, ամեն մի բեկոր իր իսկական տեղում դնելով։ Այսպիսի վերականգնման ժամանակ հատ ու կենտ պակասող քարերի տեղ դրվում են նորերը, բայց այնպես, որ ամեն մի այցելու հասկանա նրանց նոր լինելը։

Այս եղանակով կարելի է վերականգնել, օրինակ, Գառնիի տրդատաշեն տաճարը կամ հովանոցը։ Սակայն, առաջին հայացքից այդ պարզ աշխատանքն էլ ունի իր բազմաթիվ դժվարությունները, որովհետև իրականությունից փոքրիկ շեղվելը կարող է մեծ թյուրիմացությունների տեղիք տալ։ Այդ պատճառով պետք է այնպես անել, որ հասարակ քարերն անգամ դրվեն իրենց բուն տեղում և ոչ թե պատահական ձևով որևէ հարմար տեղ, իսկ այդ շատ դժվարին և մանրակրկիտ աշխատանք է պահանջում վերականգնողից։

1935 թ. Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ ճարտարապետության պրոֆեսոր Նիկողայոս Բունիաթյանն սկսեց վերականգնել Գառնիի տաճարը,

[1] «Սովետական արվեստ», 1957, № 1. էջ 48։

բայց բեկորները ճիշտ չընտրելու և վերականգնման սխալ մեթոդ կիրառելու պատճառով ակադեմիկոս Հ. Օրբելու և գիտական հասարակայնության պահանջով վերականգնման աշխատանքները դադարեցվեցին։

1956 թ. աշնանը Երևանում հրավիրված կովկասագետների Համամիութենական խորհրդակցությունում ակադ. Հովսեփ Օրբելին, նշելով պրոֆ. Ն. Բունիաթյանի սխալները, առաջարկեց հարց հարուցել Գառնիի տաճարը վերականգնելու մասին, միայն թե գիտական ճիշտ մեթոդներով։

բ. Ամեն մի աշխատանք կատարվում է հուշարձանը հետագա քայքայումից ազատագրելու նպատակով։

Այս դեպքում եղածը պահպանում են այն դրությամբ, ինչ դրությամբ նա հայտնաբերվել է պեղումների ժամանակ։ Այս եղանակը կիրառվում է բոլոր այն հուշարձանների նկատմամբ, որոնք բոլորովին ավերվել են, նրանց քարերի մեծագույն մասը ժամանակին կորել է։ Այս կարգի հուշարձանների թվին է պատկանում Զվարթնոցը, որի հազարավոր քարերից տեղում մնացել է միայն մի չնչին մասը։ Այսպիսի հուշարձանների լրիվ կամ մասնակի վերականգնումը կատարում են թղթի վրա, իհարկե ուսումնասիրելով ավերակների ամեն մի բեկոր։ Այդպես է վարվել Թ. Թորամանյանը, որը մի քանի տարիների ընթացքում ուսումնասիրելով Զվարթնոցի բեկորները, տվել է վերակազմության իր հանրահայտ նախագիծը, առանց բեկորները շուռ ու մուռ տալու և տեղում իրար հարմարեցնելու փորձերի։

Իր հոդվածում Ս. Մնացականյանը առաջարկում է հավանական մուտք, լուսամուտ, պատ, սյուն, մույթ, սյունաշարքեր, զարդաքանդակ գոտիներ կազմել՝ հուշարձանի տարբեր մասերին պատկանող բեկորներից, իսկ եթե այդ նպատակն իրագործելու համար տեղում եղած բոլոր մնացորդներն էլ չեն բավականացնի, այդ դեպքում առաջարկում է պակասը լրացնել սեփական միջոցներով, այսինքն հների օրինակով նորը շինել։

Այսպիսի վերականգնումով մենք ընդմիշտ կզրկվենք Զվարթնոցի հետագա ուսումնասիրության բոլոր հնարավորություններից։

Սակայն, մեր կարծիքով, հոդվածի մեջ էականն այդ չէ, որովհետև հուշարձանի մասնակի վերականգնման և պահպանման խնդիրները Մնացականյանի հոդվածի միայն «ներածական» մասն են կազմում, իսկ բուն խնդիրը վերաբերում է Զվարթնոցի վերականգնման իր ներկայացրած նոր նախագծին։

Ս. Մնացականյանը Զվարթնոցի իր նախագծի սկզբունքներին աշխատում է ծանոթացնել քննադատելով Թորամանյանին։ Նախ՝ հայտարարում է, որ իբր թե Թորամանյանը Զվարթնոցի վերականգնման երկու նախագիծ ունի։ Հոդվածի մեջ մի քանի անգամ շեշտվում է այդ հանգամանքը։ 49-րդ էջում նա գրում է. «Հայտնի է, որ Թորամանյանն ունի տաճարի վերականգնման երկու նախագիծ», նույն էջում, քիչ ներքև, դարձյալ գրում է. «Ուրեմն Թորամանյանն ունեցել է Զվարթնոցի վերականգնման երկու նախագիծ»։

Դա, իհարկե, ճիշտ չէ։ Թորամանյանը Զվարթնոցի վերականգնման միայն մի՝ բոլորին հայտնի նախագիծ ունի, բայց այդ նախագծի սկզբնական գծագրերի մեջ արտաքին պատի ստորին հարկաբաժնի որմնակամարների մեջ ընկնող լուսամուտները համեմատաբար ցածրադիր են։ Սակայն, 1905 և 1906 թթ., երբ Անիում կատարված պեղումներով բացվեց Զվարթնոցի օրինակով և չափերով շինված Գագկաշեն տաճարը, որի մնացորդները շատ ավելի լավ են պահպանված, քան Զվարթնոցինը, Թորամանյանը որոշ ճշտումներ կատարեց

Զվարթնոցի վերականգնման իր նախագծի մեջ։ Այդ ճշտումների հետևանքով տաճարի առաջին հարկաբաժնի երկարաձիգ լուսամուտները ավելի վերև բարձրացան և տեղավորվեցին մուտքերի գլխին, բայց տաճարի վերականգնման բոլոր սկզբունքները, ձևերը, ինչպես նաև կառուցվածքը մնացին նույնը։ Այդ ճշտումները իրավունք չեն տալիս մեզ հայտարարելու, որ Թորամանյանն ունեցել է Զվարթնոցի վերականգնման երկու նախագիծ, այլ, ամենաշատը, դրանք միևնույն նախագծի մշակման տարբեր աստիճաններն են։

Զվարթնոցի վերականգնման մեջ ճշտումներ մտցնելու ժամանակ Թորամանյանը ո՛չ միայն նկատի ունեցավ Անիի գագկաշեն տաճարի մնացորդներն ու այնտեղ գտնված նույն տաճարի կաղապարը Գագիկ արքայի ձեռքերում, այլև այն հանգամանքը, որ Զվարթնոցից առաջ կառուցված ինչպես նաև Զվարթնոցի ժամանակակից տաճարների լուսամուտները բոլորն էլ բարձրադիր են։ Այդպես են, օրինակ, Տեկորի, Երերույքի, Օձունի, Հռիփսիմեի, Գայանեի, Կարմրավորի, Բագարանի, Թալինի, Արուճի և բոլոր մնացած հուշարձանների լուսամուտները։

Սակայն Մնացականյանի կարծիքով, Թորամանյանի նախագծի նախնական վարիանտը՝ դա նրա վերջին խոսքն է, իսկ, ինչպես ինքն է անվանել, «ձգված վարիանտը»՝ նախնականն է։ Հոդվածագիրն այդ սխալ եզրակացությանն է հանգել միայն այն պատճառով, որ Զվարթնոցի վերականգնման հարցով զբաղվելիս, բոլորովին աչքաթող է արել Զվարթնոցի տիպին պատկանող մյուս կառուցվածքները, ինչպես նաև Թորամանյանի ավելի ուշ ժամանակներում հրատարակած աշխատությունները։

Մնացականյանը Զվարթնոցի վերականգնման նախնական վարիանտին է հարել գլխավորապես այն պատճառով, որպեսզի կարողանա ապացուցել, թե առաջին հարկաբաժնի վերևում, կլոր պատուհանների հետևում, շրջանաձև սրահ (գալերեա) գոյություն չի ունեցել։ Նա, հակառակ գոյություն ունեցող փաստերի, իր հոդվածի մեջ հայտարարում է, որ իբր թե Թորամանյանի նախագծում «վերականգնման նրա երկրորդ տարբերակի առաջին հարկի բարձրությունը (որ անհամեմատ ավելի ցածր է, քան առաջին տարբերակի նույն էլեմենտի բարձրությունը) լիովին բացառում է գալերեայի գոյության հնարավորությունը, և ցույց է տալիս, որ այս տարբերակում Թորամանյանն արդեն հրաժարվել է շրջանաձև գալերեայից և վերականգնման նախագիծը կազմել առանց հայկական ճարտարապետությանը միանգամայն խորթ այդ տարրի»[1]։

Թորամանյանի անունից Ս. Մնացականյանի այս հայտարարությունը զարմանք է պատճառում, որովհետև Թորամանյանի բոլոր չափագրություններերի մեջ էլ այդ բարձրադիր սրահը գոյություն ունի և այդ սրահից Թորամանյանը երբեք չի հրաժարվել։ Մի՞թե Մնացականյանին ծանոթ չէ Թորամանյանի ձեռքով գծագրված Զվարթնոցի վերականգնման այսպես կոչված «սեղմ վարիանտի» կտրվածքը, որի մեջ գոյություն ունի գալերեան շրջանաձև լուսամուտների հետևում։ Այդ գծագրերը տպագրված են Թորամանյանի աշխատությունների մեջ՝ Զվարթնոցի բաժնում[2]։

Ս. Մնացականյանի հոդվածում նկատվում է ձգտում՝ ճշտելու կամ վերանայելու Զվարթնոցի Թ. Թորամանյանի նախագիծը։ Սակայն նրա դիտողու-

[1] «Սովետական արվեստ», 1957, № 1, էջ 50։

[2] Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու, 1942, էջ 240։ Նույնը, Աշխատությունների երկրորդ ժողովածու, 1948, էջ 78, 79։

թյունները հանգամանորեն չեն հիմնավորված։ Լավ կլիներ, եթե հրապարակային քննության դրվեր վերջնականապես մշակված այդ նախագիծը։ Իսկ այն ձևով, ինչպես նա ներկայացվում է հոդվածում, տեղիք է տալիս լուրջ առարկությունների։

Եթե 1906 թ. Խաչիկ վարդապետը Զվարթնոցի կտրվածքի վրայից մկրատով հանել է գմբեթը, հայտարարելով, որ «հայի եկեղեցին այդպիսի ձև չի կարող ունենալ», ապա այսօր էլ Մնացականյանը նրա միջից դուրս է հանում գալերեան, այդ տարրը հայկական ճարտարապետության համար խորթ հայտարարելով։

Սակայն, խնդիրը պարզվում է, երբ հեղինակը իր հոդվածի վերջում խոսում է տաճարի երկրորդ հարկաբաժնի մասին և այն կարծիքն է հայտնում, որ այդ հարկաբաժինը եղել է ո՛չ թե առաջին հարկաբաժնի նման բազմանիստ, այլև խաչաձև և նստած է եղել ստորին հարկաբաժնի կիսաշրջան կազմող երեք սյունաշարքերի և արևելյան խորանի գլխին։

Այսպիսով, Մնացականյանը ձգտում է ապացուցել, որ առաջին հարկաբաժնի վերևում ներքին սյունաշարքերի կենտրոնական երկու սյուների գլխից արտաքին պատին զուգահեռ կամարներ չեն ձգվել դեպի մույթերի հետևում գտնվող արծվեխոյակ սյուները, առանց որի գալերեան չէր կարող գոյություն ունենալ, իսկ եթե այդ կամարը գոյություն ունենար, այն դեպքում անհնարին էր մույթերի կողքերում առաջին հարկաբաժնի ծածկը կապել երկրորդ հարկաբաժնի խաչաձև պատերի հետ։

Նա անտեսել է զվարթնոցատիպ բոլոր հուշարձանները, որոնք անհերքելի ապացույցներ են Թորամանյանի վերականգնման ճշտության։

Բայց, հետաքրքիր է պարզել, թե ինչ պատկեր է ստանում Զվարթնոցը այս նոր վերականգնմամբ։

Ամենից առաջ այդ հոյակապ հուշարձանը զրկվում է իր գլխավոր առանձնահատկությունից, այն է՝ նրա ճարտարապետը դեռևս VII դարի կեսերին, արտաքին պատին զուգահեռ արծվեխոյակ սյուների վրայով անցնող կոր կամարների վրա խիզախել է կառուցել տաճարի երկրորդ հարկաբաժնի հսկայական պատերը։ Մնացականյանի գծագրերում Զվարթնոցը դառնում է մի ցածրադիր շինություն, մանավանդ որ տաճարի երրորդ հարկաբաժնի որմնասյուներն իրենց կամարաշարքով դուրս են հանվում, և այդ հոյակապ հարկաբաժինը վեր է ածվում մի հասարակ գմբեթի, որ բոլորովին չի համապատասխանում երկրորդ «խաչաձև» հարկաբաժնին, իսկ երկրորդ հարկաբաժինն էլ՝ առաջին բազմանիստ հարկաբաժնին։

Այս վերակազմության նախագծով չի պարզաբանվում գմբեթակիր մույթերի դեպի արտաքին պատը ձգված լինելը և արծվեխոյակ սյուների մույթերի հետևում գտնվելը։ Ինչո՞ւ համար են դրվել այդ սյուները։

Իսկ ինչո՞վ պիտի բացատրի Մնացականյանը Զվարթնոցում գտնված սլաքավոր քանդակների զարդագոտի ունեցող կամարաքարերի գոյությունը, որոնք ըստ Թորամանյանի վերականգնման նախագծի, արծվեխոյակ սյուների վրայով անցնող կամարների մասերն են հանդիսանում։

Մեր կարծիքն այն է, որ Մնացականյանի վերականգնումը հիմնված է միակողմանի և կանխակալ եզրակացությունների վրա և հիմքից զուրկ է։ Թորամանյանի՝ վերականգնումը կարող է որոշ թերություններ ունենալ, բայց հիմնականում ճիշտ է, և 50 տարվա ընթացքում նա դիմացել է քննության։